op 1

«ԿԱԹՍԱՆԵՐԻ»
ԳՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՓԱԿ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ՓՊՄԱՊՁԲ-21/1-ԿԱԹՍԱՆԵՐ/2 N 20/653

ք. Երևան <<21>> <<06>> 2021թ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և և «ՄԵՏԱՂԱՄԱՆԵՂԵՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Հայրապետյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը սահմանում են, որ՝

1.1 Վաճառողը մասնակցել է Պատվիրատուի կողմից «**ԿԱԹՍԱՆԵՐԻ**» ձեռքբերման N **ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ՓՊՄԱՊՁԲ-21/1-ԿԱԹՍԱՆԵՐ** ծածկագրով կազմակերպված պետական գաղտնիք պարունակող փակ պարբերական մրցույթի ընթացակարգին (այսուհետև՝ ընթացակարգ) և գրանցվել է որպես հնարավոր մասնակից:

1.2 Վաճառողի կողմից հայտ ներկայացնելը պարտադիր չէ:

1.3 Հայտը Վաճառողի կողմից ներկայացվում է ծանուցվելու օրվան հաջորդող յոթ օրացուցային օրվա ընթացքում՝ ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

1.4 Վաճառողը կարող է դադարեցնել փակ պարբերական մրցույթի սկզբնական պայմանագիրը՝ դրա մասին գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ծանուցելով Գնորդին: Սկզբնական պայմանագրի դադարեցումն ավտոմատ կերպով չի դադարեցնում դրա հիման վրա նախկինում կնքված պայմանագրերը: Սկզբնական պայմանագիրը դադարում է, դրա վերաբերյալ դիմումը Գնորդի մոտ մուտքագրվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Այդ ընթացքում Վաճառողի մասին տվյալները հեռացվում են սկզբնական պայմանագիր կնքած անձանց ցուցակից:

2. Կողմերի պատասխանատվությունը

2.1 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.2 Վաճառողը պարտավորվում է չհրապարակել (ցանկացած ձևով) որևէ մեկին (այդ թվում նաև հարազատներին) պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունները, որոնք կվստահվեն կամ հայտնի կդառնան սույն ընթացակարգի շրջանակներում:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

3.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն համաձայնագրի անբաժանելի մասը: Վաճառողի վավերապայմանների փոփոխության դեպքում սույն պայմանագրի փոփոխություն չի կնքվում: Վաճառողը նոր վավերապայմանների մասին գրավոր ծանուցում է Գնորդին:

3.3 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

3.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում:

3.5 Սույն պայմանագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱԱԾ	«ՄԵՏԱՂԱՄԱՆԵՂԵՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ
ք. Երևան, Նալբանդյան104	**Կոտայքի մարզ, գյուղ Զովունի 1/142**
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի	«Արդշինբանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն	**Նաիրի մ/ճ**
Հ/հ 900011301067	**Հ/հ 2473700214350000**
ՀՎՀՀ 01507079	**ՀՎՀՀ 03300526**
	էլ. հասցեն՝ metaxamanexen@mail.ru
Տնօրենի տեղակալ	**Տնօրեն**
Ա. Հակոբյան	**Ս. Հայրապետյան**